• ՅԵՐԻՏԳՐՈՂՆԵՐԻ ՍԵՐԻԱ •

ՀՐԱՆՏ ՍԱՔՅԱՆ

# ՅԵՐԳՈՒՄ ԵՄ ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ԳՐՈՀԸ

• ՊԵՏՀՐԱՏ •

891.99
Ս-12

25.07.2013

-6 NOV 2011

№ 3 ՅԵՐԻՏԳՐՈՂՆԵՐԻ ՍԵՐԻԱ № 3

891.99
Ս-12

ՀՐԱՆՏ ՍԱԹՅԱՆ

# ՅԵՐԳՈՒՄ ԵՄ ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ԳՐՈՀԸ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԵՏՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

52147

Պետհրատի տպարան
Հրատարակ. № 2254
Գլավլիտ 7533(բ)
Պատվեր 2088
Տիրաժ 3000

22

Որը Իլյիչի։
Թշնամին ասում է.
— Սուտ է։
Իսկ մենք
չենք լալիս։
Ինչի՞։
Ձի մեռել Իլյի՛չը։—
Սո՛ւտ է։

Ջնջվում են
միջնակներն հնամյա.—
այդ ո՞վ է
ջնջում
հինը։
Հաղթում է
յերկաթե հնգամյան.
այդ ո՞վ է...
Իհարկե
Լենի՛նը։

Ժպտում են
աչքերը Իլյիչի՛,
սեղմվում են
միլլիոն սրտեր.
— Կհաղթենք, Իլյիչ,
չե՛նք գիջի,
կվառենք
մի նոր
Հոկտեմբեր։

Նվում են
«ճախերը»,
աջերը,

Կրկնում կեղծավոր․
— Սուտ է։
Բայց մենք
չենք թրջում աչքերս։
Չի մեռել Իլյիչը։—
Սո՛ւտ է։

---



## ՀԱՐՎԱԾԱՅԻՆ

Հարված առ հարված
առա՛ջ,
հա՛րվածային ընկե՛ր,
ուղեղդ,
մկանդ
լարած՝
գրոհի՛ր
նորանոր դիրքեր։

Մեզ համար
գարուն է, գարուն—
տեսնում ենք
հեռուներն անծիր։
«Հը՛նգամյակը—
չորս տարում»,
գրոհի՛ր
ու առաջ անցիր։

Թող լան, հեկեկան
կույրերը,
մի՛ լսիր
նվոց, հառաչ․
Հարվա՛ծ
թշնամու դիրքերին—
ու առա՛ջ,
առա՛ջ,
առա՛ջ։

---

# ԿԱՐՈՏ

Հողը մեր բեղուն
հարբած իր բույրից
կարոտով սպասում է
յերկաթ համբույրի:

Հասկերը շրշում են.
— Շարժվեցեք հերթի.
հասկերը սպասում են
յերկաթե յերթին:

Ինչո՛ւստրխա, ինչո՛ւստրխա.
Թող չաչե յերթդ—
դաշտերը ուզում են
լսել քո յերգը:

Թող հուռա տրակտորը
դաշտերում ազատ,
Թող գրկի՛, համբուրի՛
քրոջն հարազատ:

Թող վազե՛ն դաշտերում
մաշիններ անթիվ,
Թող հաղթանակի՛
ուժը կոլեկտիվ:

Հողը մեր բեղուն,
հարբած իր բույրից:
կարոտով սպասում է
յերկաթ համբույրի:

---



# ՄՈՒՏՔԸ

Գյուղի ծուռումուռ փողոց է,
աշնան նարինջ արեգակ է,
ու կուզիկ տները հողոտ են
ու ծխի յերիզը բարակ է:

Լուռ է չորս կողմը, հանդարտ...

Հանկարծ—
հոռոց,
կանչեր՝
— ուռռա...
Փողոցը ցնցվեց,
ծուխը
կտուրից
թռավ:

... Հիմա
կտուրներից նայում են ցած՝
հայրեր, մայրեր,
ծերեր ջահելացած.
Իսկ ներքևում
մանուկներն են վազքից հևլում:

Ահա՛: — Տրա՛կտորը բոռան
հևում է, գլորվում առաջ:
Վերևից թափվում է կրակ,
կոմյերիտ շոֆերի վրա.
Նա բարևում է ուրախ,—
փողոցը թնդում է.— ուռռա՛:

★

Այդ որը
    կանաչ կալերում
մինչև իրիկուն
կոլխոզի յերգն եր գնգում:



# ԲՅՈՒՐՈԿՐԱՏ

Ակնոցներ չունի,
    հագուստն հասարակ է,
Ձայնը հնչուն է,
    իրանը բարակ է:

Խոսում է արագ
    և շունչ չի քաշում:
Նա միշտ շրջկոմի
    դռներն է մաշում:

Վարմունքը քնքուշ է,
    ամենքի հետ— ջան.
Նա չի թաղցնի
    քեզնից վոչ մի բան:

Կ'փարվի վզովդ
    այնպես մտերիմ,
իսկ «գործիդ համար—
    մի քիչ համբերի»:

Դու կ'համբերես
    կ'խնդրես նրան,
Նա կ'ժպտա քեզ,
    կասի՝ «անպայման»:

Իսկ գործդ... գործդ
    չի ստանա լուծում,
մինչև գանգատվես
    Բանգյուղտեսչության:

## ԺՊԻՏԸ

Կանաչ սխտորը ծլում է դաշտերում,
հեռվում պարում է կապույտը լեռների.
գիտեմ յես՝ այնտեղ յերգ է զրնգում,
քաղաքն է հեվում բանվոր ձեռներից:

Հայացքն իմ շոյում է կապույտ մշուշը—
այդ ծուխն է լողում դաշտերի վրա...
Վառվում է ԿԻՄ-ը
կտրում է մուժը—
ժպտում են աղջկա աչքերը ուրախ:

Ժպիտն ինձ ասում է.
«աշխատի՛ր,
    տոկա,
տես—
    մեզ է կանչում
    կոկորդը յերկաթ»...

Իմ առաջ շարվում են հյուղերը տափակ.
իրենց պատերով— կույր ու մոխրացած,
աթարե բուրգերը կուզերը ցցած,
պղնձե դեմքերը շուրթերով պապակ...

Վճիտ աչքերը
    փայլում են կրկին
ու արագ
    սուզվում
        մշուշը կապույտ.
յերակս զարկում է.
    «տոկա՛,
        աշխատի՛ր,
վոր նորը
    շողշողա
    հյուղերում անգույն»:



## ՆԱՄԱԿ

Սիրելի աղջիկ,
քո յերգը ախ չէ՛
    տխուր— միալար:
Յերգս՝ կարկաչող,
պայքարի կանչով
    հորդում է վարար:

Յես այնպես կուզեմ,
վոր սիրտդ հուզեմ
    յերգերով հստակ
պարզ խոսքեր ասեմ
ու սիրտս բացեմ
    տողերով շիտակ:

Կարմիր շարքերում,
արնոտ դիրքերում
    կուզեմ միասին՝
կռվենք անդադրում,
հաղթենք պայքարում
    սեղմած ուս-ուսի:

Կամ դեղին արտում,
սարերի սրտում
    հունձ անենք վոսկի.
զնգա՛ գերանդին,
խնդանք յեռանդից,
    չհոգնենք իսկի:

Բայց, իմ լավ աղջի՛կ,
այս էլ իմացիր,
վոր յես անյերեր--
կլինեմ մարտիկ
արեվոտ յերկրի
Թե չսիրես էլ:

---



# ՅԵՐԳՈՒՄ

Յես չեմ սիրում
ճառել.
եվ
ինձ չե տրված:
Յես չեմ ուզում
ճիչով
ճարել
մի կտոր հաց:

Կուզեմ
իմ յերգերը
ցնցեն
մարդկանց,

վոր ինձ
իմ բանակը բանվորական
սիրե սրտանց:

Յես
տեսնում եմ,
զգում եմ.
իմ յերկիրը
գրնդում է,
հառնում
հարվածային տեմպով.
սոցիալիզմը
կյանք է դառնում,
միլիոններին
վառում
բոլշեվիկյան տենդով:

Միլիոնները
        համառ
կառուցում են կյանքը լուսե,
Նրանք
        անդարձ
ջնջում են
    կյանքը սև
և ինձ
        վոչ մի արգելք
չի խանգարի
        յերգել
մեր յերթը մեծ:

Յերդվում եմ յես

Հետ չեմ մնա
            դու մարտերից,
արնոտ յերգ կհյուսեմ
            իմ նյարդերից
մեր պայքարի
        ու գալիքի համար լուսե
կհրդեհեմ
        պայծա՛ռ
            հույզեր:

———



# ՄՈՌԱՑՎԱԾ ՊԱՏԿԵՐՆԵՐ

## 1. ՔԱՂԱՔԸ

Նայիրյան գորշ դաշտում
արյուն է.
քամին—
        տա՛շ, տո՛ւշ—
պարում է:
Փոքրիկ քաղաքը
հարբած աքաղաղ է:
Յերգում է
        մաուզերը:
Բիզ-բիզ են
        մարդկանց մազերը:
Աշուղների սազերը
վողբում են
        Հասան-Ղալան:
Շուրջը—
    ուշունց, կրակ, թալան:
— «Զենքի շարժումից
        թնդում է
            յերկինք»:
Սրի յեն տալիս՝
        յերեխա, ծեր, կին:

    Մարդիկ
        ընկել են ծուղակը.
ոդը
    կտրում են
        ճիչն ու աղաղակը:

## 2. ԱՆՈՒՇԱՐԱՆ «ՄԱՍԻՍ»

Գլխավոր փողոցում
Ջութակը
սիրտ է աղոցում:
Անուշարան «Մասիսում»
Նուրբ զրույցներ են հյուսում:
Կոնյակը
չոյում է կոկորդները
ազնվազարմ
հայի, հայուհու:
Անկյունում
մաուզերիստն է հայհոյում:
Գնում են, անուշ անում
(այդ անուշարանում)
խորտիկներ,
գինի կարմիր,
և... թարմ,
մերկ
մարմին:
Իսկ փողոցում,
դրսից—
վոսկե տառերով—
Անուշարան «Մասիս»:

## 3. «ՀԱՅ ՔԱՋԵՐԸ»

Վոսկեգույն փոշին
լողաց փողոցում:
Ուռա՛,
յեռագույն
դրոշն է փողփողում:
— «Պարզի՛ր դրոշա՛կ,
տեսնի Ցեվրոպան.
Թող բացականչե.
— Կեցցե՛ս, Հայաստան»:
Փոշին լիզում է
հոգնած դեմքերը:



96
37

«Հայ կորիճները»
ուսած զենքերը
սլանում են, վոր
հայ ազգը
փրկեն,
կծղած հասկերը
արյունով ներկեն,
թնդանոթներով
արտերը հերկեն:
«Մասսից»
գոռում են.
— կորչեն թուրքերը,
Ուրախ ժպտում են
ներկած չուրթերը,
թարմ ծաղիկներ են
ողի մեջ լողում.
բայց... «հայ քաջերը»
ինչո՞ւ յեն
դողում:

## 4. ԴԱՍԱԼԻՔՆԵՐԸ

Փչեց
փողը:
Խառնվեց
ամբոխը:
Դասալիքներին են բերում:
Ձոգնությունն ու սարսափն աչքերում—
բռնքերից քրտինքն է կաթում—
քայլում են
սվիններով ցանկապատված:
(Ո՜,
հեկեկա դու,
Մայր Հայաստան անպատված):

Բացվեց
«Մասսի»
դուռը.



ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ — ССРА
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ջոկը կանգնեց,
սպան մերկացրեց սուրը:—
Գնդապետն է
շեկ բեղերով հրաման:
Հարցում
ու կարճ հրաման.

— Ուզում եյիք
հայրենիքը ծախե՞լ:
Մա՛հ դավաճաններին:
Կախե՛լ:

(Թող թափվեն
չհնձած հասկերը,
թող ջահել հարսերը
այտերը ջրեն արցունքով.
այդպես է պահանջում
Հայաստանը ծովից-ծով):
Գնդապետը
շուռ յեկավ
կրունկի վրա
ու նորից—
անուշարան:

## 5. ՎԵՐՋԻՆ ԳԻՇԵՐ

Գիշերը
խփեց
սև վրան
քաղաքի վրա:
Ժամանակը
ծանր սողաց
(խանգարում էր վերքը)։
... Յերբ
գունատվեց
արևելքը
յերկնքի վրա
խաղաղ—



Նկարվեց
մի սև կախաղան
և յերկու անշարժ մարմին:

Հյուսսում
վառվում էր
աստղը կարմիր:

## ԼԻՐԻՔԱԿԱՆ

1.

Աղջի՛կս,
քեզ եմ յերգում.
քո մազերը գանգուր,
աչքերդ կանաչափայլ,
սիրտդ
լարի պես արագաքայլ:
Ինչ լա՛վ է
հետդ կողք-կողքի
կռվել
կոմմունիզմի համար:
Քո ջերմ ժպիտը,
քեզ
սիրում եմ յես:
Բայց...
Կոմմունիզմը կբարձրանա
առանց իմ սիրած աղջկա՛ յել.
իսկ առանց կոմմունիզմ
սեր, չկա՛ ել:

2.

Ոհո՛,
իմ սիրտը գնդակ չէ.
չեմ թողնի
հետը խաղաս:



Սիրտս
ովկյան է,
անտակ է.
վոր ընկնես խորքը
կլողա՞ս:

Ա՛,
ահա՛,
փախչո՞ւմ ես,
ասում ես՝
նավաստի չե՞ս:

— «Ո՛
ա—
ղաչում եմ.
ինձ
ՀԸ
լքե՛ս»:
Նվում է խորքում մեկը:
Իսկ իմ վճիռը
մեկ է.
կոմմունիզմի ղարբնոցում
բոլորի հետ—
առանց քեզ—
կմխեմ
սիրտս
բոցում
յերկաթի՛ պես:

## ԽՈՐՀՈՒՐԴ

Դու սիրում ես մի «լուրթ աղջկա,
վորի նմանը աշխարհում, ո՛, չկա:
Նա սպիտակ է ինչպես ծաղիկները յողեմի»:
Ցերբ նա անցնում է պատուհանիդ դեմից,
դու շշնջում ես.
— «ա՛խ,
սիրում եմ քեզ,
բայց, ավա՛ղ,
քո հայացքը սառը սահում է իմ վրայով...
և ո՞վ գիտե քո սրտի գաղտնիքը, ախո՞վ»...
Բայց դրկի՛ց,
ախար դու յերգում ես հին գրքից:
Շուրջդ յեռում է
կառուցումը,
իսկ դու յերգում ես
սրտիդ սառեցումը:
Մարգարիտ
արցունքները քո
կարծես մի գարի
բոքոն:
Փակի՛ր արցունքներիդ ծորակը,
դեպի կոմմունիզմը դարձի՛ր,
վոր բոլշևիկյան կրակը
սիրտդ թրծի:



## ՅԵՍ ՅԵՎ ՔԱՄԻՆ

Քամին
սեղմում է փորս,
յես
փակագծի պես
կոր եմ.
ցուրտը
ճանկում է այտերս,
մատներս
մեկ-մեկ փայտեր են:
Սպիտակ ավազը—
ձյունը
յերեսս ծեծում է:
— «Հե՛ռ-ռո՛ւ
(քամին է հռռում)
ցույց տուր
կրունկներդ...»
Սպիտակում են ունքերս.
ճեղքվում են քարերը:
Հիշում եմ ամռան
հուր-հո՛ւր արևը:
Յեվ հայհոյում եմ քամուն.
—«լռի՛ր,
մենք ենպե՛ս կտանք քո քթին,
վոր քո պարապ թեվերը
կպտտեն,—
առաջ կմղեն
սոցիալիզմի թվերը...»
Իսկ քամին
հռում է,
հռհռում է.
մարմինս սառչում է:

Բայց մի՛տքս— համառ
կառչում է.
«Ես հիմա՛ր քամի,
հզոր ուժ կա մի,
վոր անգամ քամու
վիզն է քամում,
թե այդ պահանջում է
իմ յերկրի
աճումը»:

———



# ՎԵԿԱՊԵ

1.

Վեկապե՛,
լսի՛ր.
յես ունեմ
մի ջահել սիրտ,
վոր բաբախում է դիզելի նման,
յերբ յես տեսնում եմ
աճող հասակը
հեղափոխության:
Մեր լայն դաշտերի
ամեն մի հասկը,
գործարանների
անիվը վերջին՝
սիրտս լցնում են
ուրախությամբ ջինջ:

Վեկապե՛,
յես սողալ չգիտեմ,
վարձկան չեմ.
կանգնել եմ գլխաբաց քո դեմ,
վոր կանչեմ.
—Ծածանվի՛ր,
բոլշեվիկյան հրդեհ,
հուրհրա՛.
մոլորակի պրոլետարներին
տո՛ւր կրա՛կ:

Ժանգը
ձայնս
չի կապել.—

Յես,
քե՛զ եմ յերգում,
Վեկապե՛:

2.

Պատմության իլիկը
դանդաղ
մանում եր
ճշմարտության սև թելը:
Ու կապիտալը
քամում եր
աշխարհի հյութերը:
Մանում եր
իլիկը,
տաղում
կապիտալը,
բանվորի շլինքը
ամուր կապի
տա՛կ եր:
Վոռնում եյին
շչակներն անհամար,
հեղեղվում եր
մեր քրտինքը,
ցամաք եր
մեզ համար
աշխարհը ինքը:
Մենք ձեռքով կոշտացած
հաց եյինք աղաչում,
մեզ վրա
կշտացած
շներն եյին
հաչում:
Իսկ յեթե
ծխնելույզները
ծուխ չեյին փչում,



մեր գլխին
ժանդարմի
մտրակն եր շաչում…
Յերբ
տերերն
ուզում եյին
աշխարհը
բաժանել,
մենք
սուզվում եյինք
ծովը արնաներկ…
հորդում եր
արյունը,
տաղում
կապիտալը.
բանվորի շլինքը
ամուր կապի տակ եր…

3.

Այդպես եր
մինչև
յեկար դու,
Վեկապե՛.
Լենինի կանչը
հնչեց.
— Վա՛ր թափեք
աշխարհի կուրից
մարդկության տականքը:
Պրոլետար,
կորի՛ր
քո անարգ կապանքը…
Ու կարմիր հեղեղը
յերկիրը
վողողեց.
բայլշևիկ ցեղը
արյունը
թողեց
հղփացած խողի:

Յերկիրը։
        կորավ
արճճի,
        գաղի,
քաոսում արյան։
Կոտրվեց
        խլիկը,
Թելը
        Թնճկվեց։
Կանչեց
        Իլյիչը·
— Առա՛ջ,
        չընկճվե՛ք

. . . . . . . . . . .

Յերբ
        արնոտ
քաոսը
        ցրվեց—
աշխարհի
        վեցերորդը
բոսորվեց։

Վերը
    կարմիր
        կապեց։
Այդ դո՛ւ եյիր·
        Վեկապե՛։

4

Յերբ
    մենք պատռում եյինք
աշխարհի նեխված յերակը,
մեր շուրջը
        փռնում եյին·



— Կլավե
    ինքն իրեն
        բայլշեվիկյան կրակը։
Հիմա
    կոմմունիզմ
        բառը,
վոր արգելե՛լ եյին,
մարմնանում ե·
ծիլերը նրա
        ցելե՛լ են,
բարձրանում են։

Մենք քարը քարի
վեր հանինք —
    ավերվածը·
բայց արդեն
        մեր քրտինքը
գերված չե՛ր։

Յերկնքի
    կապույտ թևերը
        նո՛ր ծխնելույզերը
        ձեվել են
    կոլխոզային հերկերը
    մետաղը գրկել ե։

Բետոնե կողպեքը
        սեղմում ե
Դնեպրի
        փրփրոտ բերանը,
Կուզնեցկից
        հեղեղվում ե
սև ադամանդը—
        Ուրալը,
Դոնբասը
        բոցեղեն շուրթերով
հպել են
        յերկնքի ճակատը,

Ծեմաշից
        կարշավե
            չուտով
կոմբայնի
        առաջին ջոկատը.
դաշտերում
        տրակտորները
ձայնում են
        կոլխոզի յերգը,
յերկարավիզ ելեվատորները
քաշում են
        վոսկի բերքը:
Միլլիոն
        դանդերում
կոմմունիզմն ե
        մերվում:
Կառուցումը
        վարարում ե
հնդամյա ափեն,
        բայց Հեղեղը,
            դո՛ւ յես վարում,
Վեկապե՛:

5.

Կույրերը
        ներսում մեր
ասում են.
— Արնոտ բաժակը
            պարպված ե,
իջել ե
        խաղաղության որը,
ախրե՛ք
        թշնամուն,
            պարտված ե
նա
        ու անզոր ե:



Դղրդում ե պատասխանը,
            դողում են
վախկոտները թափեն.
— Թշնամու առաջ
            սողում եք,—
մռնչում ե Վեկապեն:—
Յերբ սուլում ե
        մեր հաղթանակի քամին,
թնդանոթների փողերով ե
        փշաքաղվում թշնամին:
Ներսում՝
        վնասարարը
կրծում ե
        մեր վողնաշարը,
կուլակային բացիլը
            պղտորո՛ւմ ե
կոլխոզի արյո՛ւնը:
Վոչ թե լիզե՛լ
        ռեխը թշնամու,
պիտի խեղդել նրան
            բնում:
Կույրը
    թշնամու համար
        թող սակարկի,
մենք—
հարվածային բրիգադը
        բանվոր դասակարգի—
չենք չեղի ճամպեն.
մեր բրիգադիրն ե
            Վեկապեն:
Մի գավառ
        կշինենք
            վողջ մոլորակը,
դեն կշպրտենք
        նրա մոլոր
            ակը:

2339

Կամրացնենք
    բոլշևիկյան թափանիվ.
դեպի կոմմունիզմը
        աշխարհը
            թափ կառնի ։
Մեր հեղեղը
        վոչ-վոք
չի կարող կապել.
մեր բրիգադիրն է —
        Վեկապեն ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ — Гос. библиотека ССРА



ՀՀ Ազգային գրադարան
NL0362467

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.

52147

Грант Сатьян

**ВОСПЕВАЮ БОЛЬШЕВИСТСКИЙ ШТУРМ**

ИЗ ССР Армении, Эривань